



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ՀՐԱՄԱՆ**

«19» դեկտեմբերի 2018 թվականի

N: 602

ք. Գյումրի

**ԼԵՅԼԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ հաստատված «Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանելու մասին կարգի» 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի Ժամանակավոր պաշտոնակատարի 2018 թվականի դեկտեմբերի 18-ի զեկուցագիրը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ Լեյլի Ասլանյանին գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետությունում պատվաստումների ազգային օրացույցում ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ/ԻՊՊ (համակցված) վեցավալենտ պատվաստումների փուլային ներդրման նպատակով ազգային խորհրդակցությանը մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2018 թվականի դեկտեմբերի 21-ին:
3. Լեյլի Ասլանյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

**Տ. ՂԱՐԻԲՅԱՆ**

Փոխարինող



Իսկականի հետ՝ ճիշտ է